1 կգ տավարի մսի համադրելի գինը՝ 2500 դրամ
Անկման ցուցանիշը՝ 5%

Աղյուսակ N 4

ԱՆԿԱՊ ԲՈՔՍԱՅԻՆ ՊԱՀՎԱԾՔՈՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

(վերնագիրը խմբ. 18.03.21 N 363-Լ)

Անվանումը	Ցուցանիշը	Ծանոթագրություն
Օդափոխություն	երդիկների ընդհանուր մակերեսը պետք է լինի տանիքի մակերեսի 2.5 % և ավելի	
Տանիքի գագաթի բարձրությունը	նվազագույնը 6.0 մ	
Նստելատեղեր	լայնությունը՝ նվազագույնը 90, առավելագույնը 120 սմ (միջինում 100 սմ) երկարությունը՝ նվազագույնը 180, առավելագույնը 220 սմ (միջինում 200 սմ), նստելատեղերը պետք է միմյանցից առանձնացված լինեն մետաղյա բաժանարար կոնստրուկցիաներով*	մետաղյա բաժանարար կոնստրուկցիաները պետք է պատրաստված լինեն 2 դյույմ տրամագծով մետաղյա խողովակներով, չունենան սուր անկյուններ, դիմային մասն ունենա կորություն(ներ), վերին մասից միմյանց ամրացվող ուղղորդող խողովակները լինեն շարժական
Սալիկապատված կթի սրահ՝ ջրահեռացման համակարգով	կենդանիներին ուղղորդող, զսպող արգելապատնեշների առկայություն**	սառը և տաք ջրի առկայություն
Կերահրապարակ	մեկ գլխի հաշվով նվազագույն լայնությունը՝ 70 սմ	կերի սեղանի ամբողջ երկայնքով 50-70 սմ լայնությամբ մակերեսը պետք է լինի փայլատ սալիկով կամ պրես գրանիտով պատված
Կենդանիների համար նախատեսված տարածքը	մեկ գլխի համար 8-9 քառ. մ, ներառյալ՝ բոքսեր	
Զբոսատեղերի լայնությունը	2,65 - 4,0 մետր	անասնաշենքի ներսում

* Մետաղյա բաժանարար կոնստրուկցիաների արտաքին տեսքը և չափորոշիչները նախագծելիս և պատրաստելիս առաջարկվում է օգտվել նախարարության պաշտոնական կայքում (www.mineconomy.am) տեղադրված նախագծերից:

** Արգելապատնեշների չափորոշիչները նախագծելիս և պատրաստելիս առաջարկվում է օգտվել նախարարության պաշտոնական կայքում (www.mineconomy.am) տեղադրված նախագծերից:

(աղյուսակը խմբ. 18.03.21 N 363-Լ)

Աղյուսակ N 5

ԱՆԿԱՊ ԲՈՔՍԱՅԻՆ ՊԱՀՎԱԾՔՈՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԵՐ

(վերնագիրը խմբ. 18.03.21 N 363-Լ)

Անասնաշենքի տեխնոլոգիական ապահովման համար անհրաժեշտ սարքերը	1-ին մոդելի համար անհրաժեշտ քանակ	2-րդ մոդելի համար անհրաժեշտ քանակ	3-րդ մոդելի համար անհրաժեշտ քանակ
Քամիաար (յուրաքանչյուրը՝ 6000-12000 մ³/ժ հզորությամբ)	4/6 (24000-48000 մ³/ժ)	6/8/10 (36000-72000 մ³/ժ)	10 և ավելի* (60000 մ³/ժ և ավելի)
Էներգախնայող (LED) լամպեր լուսավորության համար (յուրաքանչյուրը՝ առնվազն 35 վատտ)	10-20	20-34	34 և ավելի
Կթի շարժական սարքավորում**	1	0	0
Կթի ստացիոնար համակարգ***	0	1	1
Կենդանիների համար նախատեսված ռետինե ներքնակներ	10-15	20-25	40-45 և ավելի
Ջրի արևային տաքացուցիչ կթի սենյակի համար	1	1	1
Անասնաշենքից գոմաղբի հեռացման սարք-սարքավորում (մոտոբլոկ, մինի տրակտոր, ավտոմատ կառավարմամբ շղթայաքերիչ և այլն)	0	1	1
Կենդանիների խոզանակ	0	0	1
Կաթի պաղեցման տարա (առնվազն 600 լ տարողությամբ), որը պետք է ունենա սառեցնող (սառնարանային) սարք, խառնիչ, ջերմաչափ, իսկ ներքին բաքը և կաթի հետ շփվող բոլոր մոնտաժված մասերը պետք է պատրաստված լինեն չժանգոտվող մետաղից	0	0	1
Խմբային տաքացնող ջրախմոց	1	1	1

* Յուրաքանչյուր 100 քառ. մետրի հաշվով՝ 2 քամիաար:
** Կարող է լինել նաև կթի ստացիոնար համակարգ:
*** Նվազագույնը 4 կենդանի միաժամանակ կթելու հնարավորությամբ:
(աղյուսակը խմբ. 18.03.21 N 363-Լ)

Ձև N 1

Հ Ա Յ Տ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
(ձևն ուժը կորցրել է 18.03.21 N 363-Լ)

Ձև N 2

ՀՀ գյուղատնտեսության նախարարին
_____ - ից
(անձի անվանում/անձի անունը, ազգանունը)

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
(ձևն ուժը կորցրել է 18.03.21 N 363-Լ)

(հավելվածը լրաց. 18.04.19 N 473-Լ, փոփ., խմբ. 18.03.21 N 363-Լ)